

ՈՂՋՈՅՆ ԶԵԶԻ,

ՍԻՐԵԼԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՅՐԵՐ

Ն.Ս.Օ. Տ. Տ. Վաղեն Ա. Վեհավառ Հայրապետի
անդրամբի խօսքը, Ա. Գաղարի նկնդեցոյ աւագ
խորանին առաջիւ (12 Մայիս, 1970):

Գերապայծառ Եղբայր, սիրելի Մխիթարեան զինուորեալ միաբաններ,
սիրելի ժողովուրդ,

Անհումապէս երջանիկ ենք որ այս պահուս կու գանձ Զեզի եւ Զեր
տունին քերելու քրիստոնէական սիրոյ ողջոյն՝ Ամենայն Հայոց Մայր Առող
Ս. Էջմիածնէն, եւ Ս. Պետրոսէն, Հռոմէն, ուր երջանկութիւնը ուժեցան
հանդիպելու, այցելելու մեծ Քահանայապետին Ն. Ս. Պօղոս Զ. Պապին:

Ճիշտ է որ երկրորդ անգամն է որ կ'այցելեն Զեզի, բայց՝ ինչպէս
Դուք անդգծեցիք, այս անզամուս Մեր այս երկրորդ այցելութիւնը՝ բա-
ցառիկ իրադրութեան մէջ տեղի կ'ունենա, որովհետեւ այստեղ գալէ առաջ,
Մենք եղանձ Հռոմ, յախտենական ժաղաքը, ծունկի եկած աղօթեցինք Սբր-
բազան Քահանայապետին հետ, երկու անդամներ, եւ Սիհանուկնան Մատրան,
եւ յետայ Կիրակի օր, Ս. Պետրոսի Տաճարին մէջ, փառահեղ իրադրութեամբ,
հանդիսաւոր Ս. Պատարագի եւ սրբացուցման բացառիկ մէկ արարողութեամբ
ընթացէնքն. եւ կը խորինմէ՛ք քէ իրօ աստուածային շնորհեներով լիցան այդ
օրերը, եւ մեր հոգիներն ալ լիցուեցան նոյն սուրբ Հոգինվ, մեր բոլորին
հոգիները, որ բախտը ունեցան գունաւելու այնտեղ:

Ինչպէս ուրիշ առիթով մը, երեկ, մասնաւոր խօսակցութեան մը ըն-
թացէն, մի ժամի սրբազն Կարդինալներու հետ կ'սեէթինք՝ քէ գուցէ այսօր
տակաւին լիիւ կերպով գտնակցութիւնը չունինք այն մեծ նշանակութեան,
որ ունեցաւ Մեր այցելութիւնը Հռոմ, այս վերջին երկու երեք օրերուն:

Կը խորինմէ՛ք եւ ինչքան ժամանակը հոփա, այդ կարենութիւնը, այդ
արժէքը առաւել պիսի քիրեղանայ եւ պողառատ դատնայ մեր եկեղեցինե-
րուն, յատկապէս մեր Եկեղեցին, Հայաշտանեայց առաքելական սուրբ Եկե-
ղեցին եւ մեր ժողովուրդին համար :

Մենք կ'աղօթենք առ Աստուած որ իրօ այդպէս ըլլայ, եւ մենք կարո-
ղանանք այս նոր բացուած պատմական էջին վրայ արձանագրել մեր հաւատ-
քի, մեր սուրբ գործերու, մեր երգայրութեան վկայութիւնները:

Վերատին ողջոյն Զեզի, սիրելի Մխիթարեան Հայրեր, եւ Աստուծոյ
օրինութիւնը. Ս. Էջմիածնէն: Ողջոյն նաև սուրբգրական Արարատէն եւ Վե-
րածնած մայր Հայաստանէն:

Գիտենք սոտուայէս որ Դուք այս կդզին վրայ կը սիրէք միշտ ըսել՝
քէ կը գտնուիք փոքրիկ Հայաստանի մը մէջ: Այս բացասրութիւնը Մեզի հա-
մար ալ շատ քանիզին է, նուիրական :

Եւ իրօ այդպէտ է. այս կդզին արդէն մօս 300 տարիներէ ի վեր ան-
բաժան մասը կը կազմէ Հայաստան սուրբ աշխարհին, եւ կապուած է այդ

աշխարհի նակատագրին հետ, եւ մասնաւորապէս մեր քրիստոնէական հաւատքին եւ հայ մշակոյրին հետ. հայ մշակոյր, որ արգասիքն է մեր քրիստոնէական հաւատքին:

Մեր մշակոյրին բոլոր արժեքները ի սկզբանէ, եւ գուցէ չենք սխալիք, եթէ ըստի՞ մինչեւ այս օրերը, շաղախուած են սուրբ Աւետարանի լոյսով: Եւ այդ լոյսէն նառագայր մը՝ մեծն Մխիթարք բերաւ այս կողին վրայ. եւ այս նառագայրը դարձաւ իսկապէս անմար երազ մը, նիշտ այնպէս՝ ինչպէս Արքացածի կատարին կուսարչի անմար կանոնակար:

Մենք եւ Դուք բոլորս կը կազմենք մէկ ամբաժան միութիւնը՝ հոգեւոր, մշակութային, ազգային իմաստով:

Թող Աստուած օրինէ այս միութիւնը, եւ արժանի դարձնէ մեզ որ հետզիտ առաւել արդիւնաւորութեամբ կարողանանք մեր պարտքը կատարել Աստուածոյ եւ մեր ժողովուրդի, հայ ժողովուրդի, Հայոց անմահ ազգի ծառայութեան նանապարհին վրայ:

Չեզի, Գերապայծան Եղբայր, վերստին, Մեր եղբայրական ողջոյնը եւ համբոյրը:



Ս. ՂԱԶԱՐԻ ՄՈՒՏՔԻՆ

Համան աջ, առաջին կարգ - Գրադ. Կարապետ նպակ. Ամառունի, Գրշ. Հայկազուն Արքապ. Արքահամեան, Գրշ. Ջզօն ևսպ. Տէր-Յանիքիան, Վեհ. Հայրապետը, Գրշ. Բարգէն Արքապ. Ապատեան, Գրագ. Հմայեան Վարդ. Կետիկեան (Արքահայր), Հոգհ. Նարեկ Վարդ. Շաքարեան, Հ. Մերորդ Վարդ. Ազգեան:

Կը հսնեւին Մուրաստ-Ռափայէլեանի աշակերտները, դրօշակով, ազգայիններ, ծանօթեր, բարեկամներ: